ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

ԱՇՈՏ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ
(1922-2007)

Գիտութեան վաստակավոր գործիչ, Երեւանի Պետական Համալսարանի Հայոց Լեզուի Ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտութիւնների դոկտոր Աշոտ Մուրադի Սուքիասեանը ծնուել է 1922 Օգոստոսի 18ին, Թբիլիսիում, բանուորի ընտանիքում: 1940ին գերազանց գնահատականներով աւարտել է միջնակարգ դպրոցը եւ ընդունուել ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտէտ: Բ. կուրսի ուսանող էր, երբ զօրակոչուեց բանակ եւ ուղարկուեց Կովկասեան Ռազմաճակատ: Մինչեւ ծանր վիրաւորուելը նա մասնակցում էր մարտերին, իսկ 1944ին զօրացրում է բանակից՝ որպէս պատերազմի հաշմանդամ: Ուսման տենչը 23ամեայ երիտասարդին կրկին բերում է համալսարան. շարունակում է կիսատ թողած կրթութիւնը եւ 1948ին աւարտում է այն: 1950-1953 «բառարանագրութիւն» մասնագիտութեամբ սովորում է ասպիրանտուրայում: Նրա գիտական ղեկավարը մեծանուն հայագէտ Հրաչեայ Աճառեանն էր: 1954ին Աշոտ Սուքիասեանը պաշտպանում է թեկնածուական ատենախօսութիւնը եւ սկսում է աշխատել ՀՍՍՀ ԳԱ Լեզուի Ինստիտուտում՝ սկզբում որպէս կրտսեր, ապա՝ աւագ գիտաշխատող:

Սկսած 1966ից Սուքիասեանի աշխատանքային գործունէութիւնը շարունակւում է ԵՊՀ Հայոց Լեզուի Ամբիոնում, իսկ 1971ին՝ դոկտորական թեզը պաշտպանելուց յետոյ, դառնում է նոյն ամբիոնի պրոֆեսոր: 1976-1991 Սուքիասեանը ղեկավարել է ԵՊՀի Հայոց Լեզուի Ամբիոնը՝ մինչեւ իր կեանքի վերջը շարունակելով գիտամանկավարժական գործունէութիւնը:

Սուքիասեանը հեղինակ է շուրջ յիսուն աշխատութիւնների, որոնք նուիրուած են հայերէնագիտութեան կարեւորագոյն խնդիրների: Հայերէնի բառարանագրութիւն, հայոց լեզուի բառագիտութիւն, գիտաուսումնական գրականութիւն՝ ահա այն գլխաւոր ուղղութիւնները, որոնք ուղեկից են եղել Աշոտ Սուքիասեանի գիտամանկավարժական ողջ գործունէութեանը:

1967ին ՀՍՍՀ ԳԱ հրատարակութեամբ լոյս ընծայուեց Սուքիասեանի՝ այսօր արդէն կոթողային համարուող *Հայոց Լեզուի Հոմանիշների Բառարան*ը, որն ընդգրկում է 83,000 բառ եւ դարձուածային միաւոր: Այս բառարանն իր ընդգրկմամբ եւ հոմանիշների տարբերակման գիտական սկզբունքներով նոր խօսք էր հայ բառարանագրութեան մէջ: Բառարանի կազմութիւնը մեծապէս նպաստեց հոմանիշների տեսութեան մշակմանն ու կիրարկմանը: Նրա հիմնական կորիզը արեւելահայ գրական լեզուի գործուն եւ ոչ գործուն բառապաշարն է՝ ներկայացուած 83,000 բառայօդուածներում, որոնցից իւրաքանչիւրում ներկայացուող հոմանիշները ընտրուած ու դասաւորուած են ըստ հայերէնի պատմական փուլերի, ըստ գործունէութեան աստիճանի, ըստ հականիշների աստիճանականութեան: 2003ին այն վերահրատարակուեց՝ մեծ լրացումներով եւ յաւելումներով: Իր 130,000 բառերով այն իր նախորդից տարբերւում է նրանով, որ աւելի ծաւալուն է, բացատրւում են հոմանիշ բառերի իմաստային նրբերանգները: Բառարանը իր ընդգրկումով, նիւթի քննարկ-

ման խորութեամբ իր արժանի տեղն ունի հայ բառարանագրութեան մէջ, եւ պատահական չէ, որ 2004ին արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման եւ հումանիստական արժէքների, այդ թւում հումանիտար գիտութիւնների զարգացման բնագաւառում ձեռք բերուած նուաճումների համար»:

1975ին լոյս տեսաւ Սուքիասեանի եւ Սերգէյ Գալստեանի *Հայոց Լեզուի Դարձուածաբանական Բառարան*ը, որն ընդգրկում է շուրջ 20,000 դարձուած: Այս ծաւալուն աշխատութիւնը հայ ժողովրդի պատկերաւոր մտածողութեան, ազգային ինքնատիպութեան իւրատեսակ արտայայտութիւնն է, իսկ նրա գործնական նպատակը՝ ժամանակակից գրական հայերէնի արեւելահայ եւ արեւմտահայ տարբերակներում տարածուած դարձուածային հարստութիւնը հայոց լեզուով խօսողների եւ գրողների սեփականութիւնը դարձնելը, որն իրականացուել է դարձուածքային միաւորների բառարանագրական մշակմամբ, այսինքն՝ նրանց իմաստների բացատրմամբ, յուզարտայայտչական ու ոճական-կիրառական, ինչպէս նաեւ ըստ լեզուական տարբեր շերտերի եւ գործածութեան ոլորտների բնութագրմամբ եւ այլ միջոցներով:

Այս բառարանի համար աղբիւր են ծառայել Խաչատուր Աբովեանից մինչեւ մեր օրերի հայ գեղարուեստական գրականութիւնը, հին եւ ժամանակակից մամուլը, հրապարակագրութիւնը, բացատրական, գաւառական, երկլեզուեան թարգմանական բառարանները:

*Ժամանակակից Հայոց Լեզուի Բացատրական Բառարան*ի (հրատարակուած 1974ին) նախապատրաստման եւ ստեղծման գործում եւս մեծ է Սուքիասեանի աւանդը: Այս բառարանի Գ. հատորի Կ տառով սկսուող բառայօդուածներն ամբողջութեամբ եւ շուրջ 20 մամուլ Ա. հատորից (Ա եւ Դ տառերով բառայօդուածներից) կազմել է Սուքիասեանը եւ կազմել է մասնագիտական մշակման բարձր մակարդակով, լուրջ գիտնականին բնորոշ բարեխղճութեամբ:

2002ին Սուքիասեանի եւ նրա դուստր Քնարիկ Սուքիասեանի համատեղ ջանքերով լոյս ընծայուեց *Արդի Հայերէնի Ուղղագրական-Հնչակազմական Բառարան*ը, որը պարունակում է արդի գրական արեւելահայերէնի գրաւոր խօսքի համար կարեւորութիւն ունեցող աւելի քան 76,000 բառարանային միաւոր: Այս բառարանն արժեւորւում է նաեւ նրանով, որ միօրինականացուած են բառերի հնչիւնական տարբերակները, ներկայացուած է բայական համակարգը՝ նշելով բայերի սեռը, անկանոն բայերի եւ պակասաւոր բայերի անհրաժեշտ ձեւերը, որոշ բառերի հոլովման, յոգնակիի կազմութեան օրինաչափութիւնները: Բառարանն ունի նաեւ յաւելուած, որտեղ տրուած են հայերէնի ուղղագրութեան, կէտադրութեան, տողադարձի, մեծատառերի գործածութեան կանոններ, տարածուած անձնանունների, տեղանունների, աշխարհի պետութիւնների եւ մայրաքաղաքների անուանումներ եւ այլ ցանկեր:

Սուքիասեանի տեսական ուսումնասիրութիւնների մեծ մասը նուիրուած է հայոց լեզուի բառագիտութեանը: *Հոմանիշները Ժամանակակից Հայերէնում* մենագրութիւնը (1971) նրա նոյնանուն բառարանի նիւթի տեսական ամփոփումն է, մի ծանրակշիռ աշխատութիւն, որի համար նրան շնորհուեց բանասիրական գիտութիւնների դոկտորի աստիճան: Հայերէնագիտութեան մէջ առաջին անգամ Սուքիասեանը կատարեց հոմանիշների խոր վերլուծութիւն, բազմակողմանիօրէն քննարկեց նրանց առնչուող բոլոր խնդիրները:

Աշոտ Սուքիասեանը նաեւ ճանաչուած ու սիրուած դասախօս էր: ԲՈՒՀերի բանասիրական բաժինների ուսանողների համար շուրջ քառորդ դար որպէս ուսումնական դասագիրք է ծառայում *Ժամանակակից Հայոց Լեզու (Հնչիւնաբանութիւն, Բառակազմութիւն)* ուսումնական ձեռնարկը (ԵՊՀ, 1982, Բ. հրատարակութիւն՝ 1989): Փաստական հարուստ նիւթի բազմակողմանի քննութեան, այդ նիւթի նորովի մատուցման, պարզ ու յստակ շարադրանքի շնորհիւ այսօր էլ գիրքը չի կորցրել թարմութիւնը եւ յաջողութեամբ ծառայում է իր նպատակին:

Պրոֆեսոր Սուքիասեանը նաեւ գիտամանկավարժական աշխատանքների հմուտ կազմակերպիչ էր: Շուրջ 15 տարի նա ղեկավարել է ԵՊՀի Հայոց Լեզուի Ամբիոնը: Նրա ղեկավարութեան օրօք հրատարակուել են հայոց լեզուի ԲՈՒՀական շատ դասագրքեր, ձեռնարկներ, պաշտպանուել են դոկտորական, թեկնածուական ատենախօսութիւններ: Նա Ուսուցիչ էր երիտասարդ լեզուաբանների համար՝ սկզբունքային, խստապահանջ, միաժամանակ՝ բարի, քաջալերող:

Աշոտ Սուքիասեանը մահացաւ 2007 Յունուար 13ին, Երեւանում:

ՍՈՖԻԿ ԲԱՂՈՒՄԵԱՆ
arusus@yahoo.com

ՄԱՐԹԻՆԻԱՆՈ ՌՈՆՔԱԼԻԱ
(1923-2008)

Հմուտ արեւելագէտ, գրադարանապետ եւ դասախօս Մարթինիանո Փելեկրինո Ռոնքալիա ծնած է 1923ին, Ռեճիոլո, Իտալիա: Ծննդավայր երկրին մէջ ստանալէ ետք իր դպրոցական ուսումը, Սորպոնի եւ Միւնիխի համալսարաններէն կը վկայուի որպէս արեւելեան քրիստոնէական գիտութիւններու, եկեղեցիներու պատմութեան եւ քաղաքակրթութեան մասնագէտ:

1963էն մինչեւ 2000, դասախօսած է Եգիպտոսի, Գերմանիոյ, Իտալիոյ, Ֆրանսայի, Զուիցերիոյ եւ Լիբանանի տարբեր համալսարաններուն մէջ, ուսուցանելով յատկապէս արեւելեան քաղաքակրթութեան առնչուող նիւթեր: 1961էն 1972 եւ այնուհետեւ մինչեւ իր մահը ապրեցաւ Պէյրութ: Ռոնքալիայի անունը անբաժան պիտի մնայ Պէյրութի Գերմանական Արեւելագիտական Հիմնարկէն, որուն հիմնադիրներէն ու երկարատեւ մատենադարանապետն էր: Ան անդամ էր եւրոպական արեւելագիտական ընկերութիւններու:

Հեղինակ է մօտ երեք տասնեակ գիրքերու եւ հարիւրաւոր յօդուածներու, խմբագրած է բազմահատոր արեւելագիտական հրատարակութիւններ:

Ուսումնասիրութիւններուն ընթացքին, Ռոնքալիայի ուշադրութենէն չէ վրիպած նաեւ հայոց պատմութիւնը. հայութեան առնչուող իր առաջին յօդուածը լոյս կը տեսնէ 1957ին, *Studia Orientalia* հանդէսին մէջ "Les Franciscains et les Armeniens Catholiques" վերնագրով: 1962ին *Oriens* հանդէսին մէջ լոյս կը

տեսնէ "Itinerario in Egitto di Simeone, Viaggiatore Polacco (1615-1616)" (Սիմէոն լեհ ճամբորդի ճանապարհորդութիւնը Եգիպտոս) ուսումնասիրութիւնը. կրկին *Oriens*ի մէջ 1962ին կը հրատարակուի Մեսրոպ Եպս. Թերզեանի *Le Patriarcat de Cilicie et les Armeniens Catholiques (1740-1812)* գիրքին գրախօսականը, իսկ 1972ին՝ Լիւիս Միսիրի *Arbre Genealogique de la Famille Missir (1671-1969)* գիրքին գրախօսականը *Parole d l'Orient* հանդէսին մէջ: Նոյն հանդէսին մէջ 1998ին կը հրատարակէ "L'Armenie de Cilicie et les Croisés, Apres la Chute d'Acre (1291)" յօդուածը:

Ռոնքալիա աշխատակցած է նաեւ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին: ԺԳ. հատորին մէջ լոյս կը տեսնէ "Marino Sanuto 'Il Vecchio', detto Torsello e Gli Armeni di Cilicia. Qualche Informazione" (Կարգ մը ծանօթութիւններ Թորսելլօ անուանուած ծերունկին եւ Կիլիկիոյ հայերուն մասին) ուսումնասիրութիւնը, իսկ ԺԸ. հատորին մէջ՝ "Massacres et Deportations d'Armeniens au Moyen-age d'apres *Le Liber Peregrinationis* de Jacopo de Verone, 1335" (Հայոց ջարդերն ու տեղահանութիւնը միջնադարուն, 1335ին, ըստ Ժաքոփօ Տը Վերոնի) հրապարակումը:

Իր անտիպ աշխատանքներուն մէջ ալ կը գտնուին այլ հայագիտական ուսումնասիրութիւններ:

Գերմանական, իտալական եւ լիբանանեան պետութիւններուն կողմէ շքանշաններու արժանացած Մարթինիանօ Ռոնքալիա մահացաւ 11 Յունուար 2008ին, Պէյրութի մէջ:

<<<

ԵՂԻԱ ՆԱՃԱՐԵԱՆ
(1933-2008)

Արեւելագէտ, խմբագիր Եղիա Յովսէփի Նաճարեան ծնած է 17 Ապրիլ 1933ին, Պէյրութ, ատանացի ծնողքէ:

Նախնական ուսումը ստացած է Ազգային Աբգարեան Վարժարանին մէջ, իսկ երկրորդականը՝ Անթիլիասի Դպրեվանքի Ճեմարանին մէջ:

1950ականներէն դասաւանդած է Պէյրութի եւ Դամասկոսի Աբգարեան եւ Թարգմանչաց վարժարաններուն մէջ, միաժամանակ վարած է Պէյրութի *Այգ* օրաթերթի խմբագրապետի պաշտօնը, ուր կատարած է նաեւ ֆրասերէնէ հայերէն թերթօնային գրականութեան թարգմանութիւններ: Աշխատակցած է նաեւ Պէյրութի *Ազդարար* օրաթերթին:

1957ին Պէյրութի մէջ հրատարակած է *Դաշնակ Ղեկավարութիւնը Օտարի Ծառայութեան Մէջ* գրքոյկը, որ յաջորդ տարի լոյս տեսած է արաբերէն: 1959ին ընտանեօք հայրենադարձած է Հայաստան: Ուսումը շարունակած է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրութեան Ֆակուլտէտին մէջ, ուրկէ շրջանաւարտ եղած է 1963ին:

Աւելի քան քառասուն տարի աշխատած է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի Արաբական Բաժնին մէջ:

Դասաւանդած է ԵՊՀի Արեւելագիտութեան Ֆակուլտէտին մէջ:

1974ին պաշտպանած է դոկտորական թեզը՝ «Արաբական Ազգային Մշակութային Զարթօնքը» նիւթով: Գիրքին արաբերէն թարգմանութիւնը լոյս տեսաւ 2005ին Դամասկոսի եւ Գահիրէի մէջ միաժամանակ: 1985ին ՀՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիան հրատարակած է Նաճարեանի *Լիբանանը 18րդ Դարի Վերջին եւ 19րդ Դարի Սկզբին* ուսումնասիրութիւնը:

Ան 1988էն սկսեալ աշխոյժ մասնակցութիւն ունեցած է Ղարաբաղեան Շարժման մէջ: 1989ին Պէյրութի մէջ հրատարակած է *Արցախեան Հարցի Սեւ Թղթածրարը* գիրքը, որ առջինեկն է արցախեան հարցի պատմութեան մէջ:

1989-92 հիմնադիր-խմբագիրը եղած է Երեւանի *Փիւնիկ* շաբաթաթերթին (լոյս տեսած 19 Մայիս 1990-22 Հոկտեմբեր 1991 շրջանին):

1991ին մասնակցած է Հայաստանի մէջ ՍԴՀ Կուսակցութեան հիմնադրման աշխատանքներուն եւ վարած անոր նախագահի պաշտօնը մինչեւ 1998: 1991-98 եղած է հիմնադիր-խմբագիրը Երեւանի *Հնչակ Հայաստանի* շաբաթաթերթին (20 Հոկտեմբեր 1990-1998ի կէսերը): Օգնած է *Եզդիներու Ձայն* օրաթերթի հիմնադրման:

Ան աշխատակցած է *Հայկական Սովետական Հանրագիտարան*ին, որուն Ա. եւ Բ. հատորներուն մէջ լոյս տեսած են Լիբանանի եւ Արեւելքի մասին իր ստորագրած կարգ մը յօդուածները:

Հայաստան հաստատուած առաջին տարիներուն գրած է պատմուածքներ, որոնք 1965ին լոյս տեսած են *Ջրապտոյտ* վերնագրեալ գիրքով:

1995-99՝ եղած է Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւոր, ինչպէս նաեւ անոր Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի անդամ: 1999ին վերադառնալով Պէյրութ, լոյս կ'ընծայէ ՍԴՀԿի Հայաստանի Հանրապետութեան մէջ վերականգնումին ու կուսակցութեան Սփիւռքի եւ Հայաստանի ղեկավարութեանց միջեւ յարաբերութիւններու պատմութեան գրքոյկը՝ սահմանափակ տպաքանակով:

1986ին պարգեւատրուած է Սովետական Հայաստանի Գերագոյն Խորհուրդի Աշխատանքի Վետերանի շքանշանով:

Եղիա Նաճարեան մահացաւ 6 Յունուար 2008ին, Պէյրութ:

ՀՀՀ

ՆԵԼԼԻ ՅԱԿՈԲԵԱՆ
(1936–2008)

Բանագէտ, Երեւանի Պետական Համալսարանի երկարամեայ դասախօս Նելլի Արմենակի Յակոբեանը ծնուել է 1936 Հոկտեմբերի 5ին, Բաքուում: Հայրը ծագումով Ղարաբաղի Մարտունու շրջանի Մուշկապատ գիւղից էր, մայրը՝ Շուշիի Քարինտակ գիւղից, ազգակից Լէոյին եւ բժշկութեան պատմաբան, ակադեմիկոս Լեւոն Յովհաննիսեանին:

Նելլի Յակոբեանը 1943-1953 սովորել է Երեւանի Պուշկինի անուան դպրոցում: 1953-1958ին սովորել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտէտի Ռուսական Բաժնում, որը գերազանց աւարտելուց յետոյ դասաւանդել է ռուսաց լեզու՝ ԵՊՀում եւ այլ ԲՈՒՀերում:

1969ին թեկնածուական ատենախօսութիւն է պաշտպանել «Երգիծանքը եւ Հումորը Սասնայ Ծռերում» թեմայով (գիտական ղեկավար՝ ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանեան):

1968ից մինչեւ 2007 հայ ժողովրդական բանահիւսութիւն է դասաւանդել ԵՊՀում՝ կրթելով բանասէրների մի քանի սերունդ եւ պատրաստելով բանագէտ-բանահաւաքներ, ովքեր այսօր աշխատում են ՀՀ տարբեր գիտական հիմնարկներում:

Հեղինակ է մի շարք մենագրութիւնների եւ մօտ չորս տասնեակ գրականագիտական եւ բանագիտական յօդուածների, որոնցում գիտական մշակման են ենթարկուած բանահիւսութեան գեղարուեստական արժէքի, բանահիւսութեան եւ գրականութեան առնչութիւնների, բանահաւաքութեան պատմութեան եւ ասացողական արուեստի հետ կապուած հարցեր:

1970-1980ականներին կազմակերպել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտէտի բանահիւսական գրառումների ամէնամեայ ամառային աշխատանքները Հայաստանի տարբեր շրջաններում: Իր անմիջական ղեկավարութեամբ հսկայական ծաւալի նոր գրառումներ են կատարուել, որոնցից նա հրատարակել է հեքիաթների երկու ժողովածու՝ *Հիմա՞ Ես Ուզում, Թէ՞ Յետոյ* (Երեւան, 1977, խմբագիր՝ Մանուէլ Ասատրեան) եւ *Հայկական Ժողովրդական Հեքիաթներ* (Երեւան, 1980, խմբագիր՝ Հրանտ Մաթեւոսեան):

Այս ժողովածուներից առաջինում ներկայացում են կատարուած գրառումների վերապատումները, որոնցում, սակայն, հեղինակները աշխատել են առաւելագոյնս հարազատ մնալ հեքիաթների ասացողական արուեստին, պատումի ոճին եւ նպատակին, որի համար վերաշարադրանքում գրական լեզուին միահիւսուած օգտագործուել են նաեւ ժողովրդախօսակցական լեզուի տարրեր. երբեմն անգամ իրար կից բերում են միեւնոյն արտայայտութեան գրական եւ բարբառային ձեւերը, որոնք ժողովրդական շունչ եւ բոյր են հաղորդում գրական շարադրանքին: Ժողովածուի նպատակն է եղել ոչ միայն ներկայացնել հայկական ժողովրդական հեքիաթների կենդանի շունչը, այլեւ ընթերցողներին մղել բանահիւսական նիւթերի գրառմանը՝ նրանց ներշնչելով այն միտքը, որ իրենք պէտք է դառնան ժողովրդական ստեղծագործութիւնների մերօրեայ գրառողներն ու փրկողները:

Յաջորդ ժողովածուն ներկայացնում է գրառուած հեքիաթները՝ հրատարակութեան ընդունուած գիտական սկզբունքներով երեք ճիւղերի (Ում, Էլ, Կը) բարբառներով: Գրքի վերջում ներկայացում է ոչ միայն դժուար հասկանալի բարբառային բառերի բառարանը, այլեւ իւրաքանչիւր հեքիաթ օժտուած է ծանօթագրութիւնների համապատասխան համակարգով, ուր տեղեկութիւններ են տրւում գրառողի եւ ասացողի, նաեւ թէ՝ ասացողն ումից եւ որտեղ է լսել այն: Մատնանշւում են նաեւ տուեալ հեքիաթների՝ ԵՊՀի բանահիւսական արխիւում եղած եւ միջնադարեան աղբիւրներից ու հայ ժողովրդական հեքիաթների հրատարակութիւններից յայտնի տարբերակները: Գրքում բերուած են գրառուած 49 հեքիաթ, որոնց հրատարակութիւնը կարեւորում է ոչ միայն նրանց գեղարուեստական, այլեւ բարբառագիտական արժէքով, քանի որ նրանցում ի յայտ են գալիս բարբառների աստիճանական գրականացման

միտումները: Այդ հեքիաթներում դրսեւորում են Յեղասպանութիւնից ու ներգաղթից յետոյ եւ ժողովրդագրական տեղաշարժերի հետեւանքով Խ. Հայաստանում բարբառների միախառնումով առաջացած բարբառային փոխազդեցութիւնները:

1970ականներին Յակոբեանը հեռուստատեսութեամբ վարեց ուսումնական հաղորդումների տեւական մի շարք (գլխաւոր ռեժիսոր՝ Արթուր Մինասեան), որն իր կարեւոր նպաստը բերեց բանահիւսութեան տարբեր սեռերի հասարակական ճանաչողութեան, դրանց գրական-գեղարուեստական մշակման, երաժշտական կատարման եւ ընդհանրապէս ժողովրդական ստեղծագործութիւնների հանդէպ 1970-1980ականների աննախադէպ հետաքրքրութիւն բարձրացնելու գործում: Կարելի է ասել, որ 1970ականների Խորհրդային Հայաստանում առաջացած ազգագրական շարժման ակունքներում է գտնւում Նելլի Յակոբեանի գործունէութիւնը:

Գրականագիտական, ի մասնաւորի՝ կերպարային վերլուծութեան վիպական գեղարուեստական խօսքի պատմահամեմատական քննութեան լաւագոյն օրինակ է Յակոբեանի *Կերպարների Կերտման Սկզբունքը Սասնայ Ծռերում* (Երեւան, 1983) ուսումնասիրութիւնը: Այստեղ հանգամանալից քննութեամբ ցոյց է տրւում մեր ազգային դիւցազնավէպի գլխաւոր հերոսներից իւրաքանչիւրի գործողութիւնների եւ պահուածքի ներքին պատճառաբանուածութիւնը ժողովրդի գեղագիտական հաւաքական ըմբռնումների եւ դարաւոր աշխարհայեացքի շրջանակում:

Նելլի Յակոբեանի ղեկավարութեամբ իրականացուած գրառումների բարձրակէտն է ժողովրդական խաղիկների հաւաքածուն: Մանուկ Աբեղեանի նշանաւոր *Ժողովրդական Խաղիկներ* ժողովածուն, որը պարունակում է 4500 միաւոր, օրինակ է ծառայել կազմելու մի նոր ժողովածու, որը ոչ միայն ունի Աբեղեանի ժողովածուում ներկայացուած գրեթէ բոլոր միաւորներն իրենց փոփոխակներով, այլեւ բազմաթիւ նոր միաւորներ՝ գրառուած ազգագրական տարբեր շրջաններում եւ տարբեր բարբառներով: Տակաւին անտիպ այս ժողովածուում ի մի են հաւաքուած հինգ հազար միաւոր խաղիկներ, որոնք տարբեր շրջաններում գրառուած իրենց փոփոխակների հետ ներկայացնում են 25,000 խաղիկ՝ ցոյց տալով ժողովրդական քնարական փոքրիկ այս ստեղծագործութիւնների կենսունակութիւնը, պոէտիկ գրաւչութիւնը եւ որոշակի թեմատիկ փոխակերպումները Խորհրդային Հայաստանի գիւղական նոր կեանքի եւ միջավայրի պայմաններում: Աբեղեանի ժողովածուում առկայ նիւթի ներառմամբ կազմուած խաղիկային միաւորների այս նոր հրատարակութիւնը, որը կ'իրականանայ Յակոբեանի ուսանողների ջանքերով, կը դառնայ իրենց ուսուցչի յիշատակին կանգնեցուած մնայուն մի յուշարձան:

Ալեքսանդր Նիկոլաեւիչ Աֆանասեւի՝ ռուսական ժողովրդական հեքիաթների ժողովածուից Նելլի Յակոբեանի անմիջական ղեկավարութեամբ ընտրուեց հեքիաթների մի փունջ եւ հայերէն թարգմանութեամբ (թարգմանիչներ՝ Արծրուն Սահակեան, Ա. Սեղրակեան) հրատարակուեց *Ռուսական Ժողովրդական Հեքիաթներ* (Երեւան, 1987) գիրքը «Աշխարհի Ժողովուրդների Հեքիաթները» մատենաշարով:

Շուրջ չորս տասնամեակ իր դասախօսութիւններով, գիտա-մանկավարժական գործունէութեամբ ու մտաւորականի էութեամբ ուսանողների համար բարձր արժէքային համակարգի կենդանի կրողը եւ փոխանցողը եղաւ Նելլի

Յակոբեանը, ուսուցանելով, որ գիտնականի կեանքում անբաժանելիօրէն իրար միահիւսուած պէտք է լինեն գիտական խստապահանջութիւնը, քննականութիւնը եւ մարդկային ու հասարակական բարոյական բարձր նկարագիրը:

Նելլի Յակոբեանը մահացաւ 2008 Փետրուարի 25ին, Երեւանում:

ԱՐԾՐՈՒՆ ՍԱՀԱԿԵԱՆ
ՎԱՐԴԱՆ ԴԵՒՐԻԿԵԱՆ
devrikyan@yahoo.com

ՎԱՐԱԶԴԱՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
(1909-2008)

Կեանքի 99րդ տարին չբոլորած վախճանուեց ճարտարապետութեան դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս Վարազդատ Մարտիրոսի Յարութիւնեանը:

Նա ծնուել է 1909 Նոյեմբերի 29ին, Վան քաղաքում եւ իր հազարաւոր բախտակից հայրենակիցների հետ 1915ին բռնել գաղթի ճանապարհը՝ ժամանակաւորապէս հաստատուելով Թբիլիսիում: Այստեղ ապագայ գիտնականն աւարտել է միջնակարգ դպրոցը, ապա Երեւանում ընդունուել Պոլիտեխնիկական Ինստիտուտ, որը 1937ին գերազանց դիպլոմով աւարտել է եւ ստացել ճարտարապետի կոչում: 1938ին նոյն ինստիտուտում Վարազդատ Յարութիւնեանը սկսեց իր մանկավարժական աշխատանքը, որը եւ շարունակեց մեծ ջանասիրութեամբ շուրջ եօթ տասնամեակ, մինչեւ 1999: 1945-90 նա Ճարտարապետութեան Ամբիոնի վարիչն էր:

Դեռ ուսանողական տարիներին դրսեւորուել են Յարութիւնեանի սէրը եւ ձգտումը դէպի հայկական միջնադարեան ճարտարապետական յուշարձանների հետազօտումը: Դա 1939ին նրան բերեց ԽՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիայի Հայկական Մասնաճիւղի ասպիրանտուրա, որն աւարտեց՝ գրելով եւ 1946ին պաշտպանելով որպէս ատենախօսութիւն՝ «Դուինի Ճարտարապետական Յուշարձանները» աշխատութիւնը (այն հրատարակուեց առանձին գրքով 1950ին՝ *Դուինի V-VII Դարերի Ճարտարապետական Յուշարձանները* վերնագրով):

Չկտրուելով գիտական-հետազօտական եւ մանկավարժական գործունէութիւնից՝ Յարութիւնեանը 1945ից դրանք յաջողութեամբ զուգակցել է ճարտարապետական հաստատութիւններում ղեկավար աշխատանքի հետ: 1945-1951, նա գլխաւորել է Հայաստանի Յուշարձանների Պահպանութեան Կոմիտէն, 1962-1974՝ եղել է Հայաստանի Ճարտարապետների Միութեան նախագահ եւ 1977ից մինչեւ մահը՝ Հայաստանի Պատմութեան եւ Մշակոյթի Յուշարձանների Պահպանութեան Ընկերութեան նախագահ:

Յարութիւնեանը մօտ կէս դար եղել է Երեւանի Պոլիտեխնիկական Ինստիտուտի Ճարտարապետութեան Ամբիոնի վարիչը, առաջինն է մշակել հայ-

կական ճարտարապետութեան պատմութեան եւ տեսութեան դասընթացների հիմունքները, մտցրել Հայաստանում խիստ անհրաժեշտ՝ յուշարձանների վերանորոգման եւ վերականգնման գործի դասաւանդումը: Իր հետազօտական աշխատանքի հենց սկզբից գիտնականը դրսեւորեց իրեն ոչ միայն որպէս հայկական ճարտարապետութեան իսկական գիտակ, այլեւ, որը շատ կարեւոր է, իսկական հայրենասէր: Նրա «Արուճի Տաճարի Թուագրման Առթիւ» 1946ին ռուսերէն տպագրուած աշխատանքը վրացի գիտնական Գէորգի Չուբինաշուիլու՝ հայկական մշակոյթի հանդէպ կատարած ոտնձգութիւններին պատասխան էր, որի համար այդ տարիներին քաղաքացիական խիզախութիւն էր պահանջւում:

Փորձ կուտակելով Հայաստանի ճարտարապետութեան քիչ-ուսումնասիրուած առանձին խնդիրների հետազօտութեան ասպարէզում, Յարութիւնեանը 1951ին Մոսկուայում (Ս. Սաֆարեանի հետ համատեղ) հրատարակեց ռուսերէն *Pamiatniki Armiasnskogo Zodchestva* (Հայկական ճարտարապետութեան յուշարձաններ) գիրքը հարուստ պատկերազարդումով եւ գիտական բարձր մակարդակով շարադրուած:

Յարութիւնեանի գիտահետազօտական աշխատանքում արժէքաւորն այն է, որ նա ուշադրութիւն էր դարձնում հայկական ճարտարապետութեան չուսումնասիրուած կամ քիչ ուսումնասիրուած հարցերի վրայ: Այնպիսի թեմաներ, ինչպիսիք են միջնադարեան Հայաստանի քաղաքաշինութիւնն ու աշխարհիկ ճարտարապետութիւնը, դարձան նրա երկարատեւ հետազօտութիւնների հիմնական բնագաւառները, որոնց արդիւնքները հեղինակը տպագրեց որպէս մնայուն արժէքի գործեր՝ առանձին գրքերով եւ յօդուածներով: Այդ մենագրութիւններից *Միջնադարեան Հայաստանի Քարաւանատներն ու Կամուրջները* գիրքը (Երեւան, 1960) եղաւ ներդրում՝ հայկական աշխարհիկ ճարտարապետութեան ուսումնասիրութեան գործում:

Յարութիւնեանի, որպէս գիտնականի, նշելի գծերից է նաեւ այն, որ նա հիմնականում զբաղուելով Հայաստանի հին եւ միջնադարեան ճարտարապետութեան խնդիրներով, իր այդ աշխատանքն արդիւնաւէտ զուգակցել է նաեւ հայկական ժամանակակից ճարտարապետութեան հարցերի հետազօտութեան: Դրան են նուիրուած ամսագրերում եւ թերթերում լոյս տեսած՝ նրա հարիւրաւոր յօդուածները, տպագրած զեկուցումները եւ *Խորհրդային Հայաստանի Ճարտարապետութիւնը* մենագրութիւնը, տպագրուած Երեւանում, 1955ին (Կ. Յովհաննիսեանի հեղինակակցութեամբ): Այս գիրքը եղաւ Ի. դարի հայկական ճարտարապետութեան կազմաւորման ու զարգացման պատմական գործընթացի գիտական համակարգման առաջին փորձը:

Յարութիւնեանի՝ 1960ականների հետազօտութիւնների շարքում ամենանշանակալիցը *Քաղաքաշինութիւնը Հին եւ Միջնադարեան Հայաստանում* խոշոր մենագրութիւնն էր, որը հեղինակը 1964ին յաջողութեամբ պաշտպանեց որպէս ատենախօսութիւն Լենինգրադում եւ ստացաւ ճարտարապետութեան դոկտորի գիտական աստիճան: Այս աշխատութեան է առնչւում նրա գրչին պատկանող, նոյն թուին Երեւանում տպագրուած *Անի Քաղաքը (Միջնադարեան Հայաստանի Քաղաքաշինութեան Պատմութիւնից)* գիրքը՝ նուիրուած Հայաստանի երբեմնի մայրաքաղաքին: Իսկ այժմեան մայրաքաղաքին է նուիրուած 1968ին Մոսկուայում լոյս տեսած *Երեւան* գիրքը (հեղինակակիցներ՝ Մ. Հասրաթեան եւ Ա. Մելիքեան), որտեղ առաջին անգամ ներկայացւում

է Երեւանի ճարտարապետութիւնը քաղաքի հիմնադրումից մինչեւ նրա 2750ամեայ յոբելեանը: 1964ին նա հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց վաղամեռիկ Էմին Յակոբեանի *Աշտարակի Շրջանի Ժողովրդական Բնակարանի Ճարտարապետութիւնը* հատորը:

Սփիւռքի հայութեանը եւ ընդհանրապէս արտասահմանեան ընթերցողին Հայաստանի ճարտարապետական ժառանգութեանը ծանօթացնելու գործում խիստ կարեւոր էր 1975ին, Մեծ Եղեռնի 60ամեակին, Բէյրութում լոյս տեսած նրա *Monuments of Armenia (From the Prehistoric Era to the 17th Century) Հայաստանի Յուշարձանները* (Մօրուս Հասրաթեանի մասնակցութեամբ) շքեղ պատկերազարդ գիրքը՝ հայերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով:

1978ին Յարութիւնեանը հրատարակեց *Հին Աշխարհի Ճարտարապետութիւնը* ուսումնական ձեռնարկը՝ հիմնականում գրուած իր արտասահմանեան ուղեւորութիւնների ժամանակ կատարած սեփական դիտարկումների հիման վրայ: 1988ին լոյս տեսաւ *Եկայք Շինեսցուք* գիրքը՝ նուիրուած Վազգէն Ա. Կաթողիկոսի գահակալութեան տարիներին Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունէութեանը:

Յարութիւնեանի կէսդարեայ ուսումնասիրութիւնների հանրագումարը եղաւ 1992ին տպագրուած *Հայաստանի Ճարտարապետութեան Պատմութիւն* կոթողային մենագրութիւնը (գրքի ռուսերէն համառօտ տարբերակը՝ *Kamennaya Letopis Armyanskogo Naroda* (Հայ ժողովրդի քարակերտ պատմութիւն) հրատարակուել էր Երեւանում 1985ին): Այս հիմնարար աշխատանքում տրուած է Հայաստանի շինարարական արուեստի ստեղծման, կազմաւորման եւ զարգացման փուլերի ողջ պատկերը: Գրքի իմացաբանական արժէքը կրկնապատկւում է հարուստ փաստագրական նիւթով, գիտական եւ միաժամանակ մատչելի շարադրանքով. այն հաստատուել է որպէս դասագիրք ճարտարապետութեան մասնագիտութեան ուսանողների համար:

Վարազդատ Յարութիւնեանը մեծ աւանդ ունի ճարտարապետութեան տեսական խնդիրների ուսումնասիրման գործում. մի բնագաւառ, որով շատ քչերն են զբաղուել: Նրա «ժառանգորդութիւնը միջնադարեան հայկական ճարտարապետութեան մէջ» թեմային նուիրուած ուսումնասիրութիւնների շարքը այդ բարդ եւ այժմէական հիմնահարցին վերաբերող լաւագոյն հետազօտութիւնն է:

Ուշագրաւ է, որ վերջին տարիներին, երբ զգալի նուազել էին հայագիտութեան բնագաւառում նոր աշխատութիւնների ստեղծումը եւ դրանց հրատարակումը, նա կրկնապատկուած եռանդով ու երիտասարդական աւիւնով, մինչեւ իր բեղմնաւոր կեանքի աւարտը, մէկը միւսի ետեւից տպագրում էր ինչպէս գիտական ուսումնասիրութիւններ (օրինակ՝ *Սուրբ Էջմիածնի Շինարար Գահակալները*, Ս. Էջմիածին, 1996), այնպէս էլ իր ուղեգրութիւնները, Հայաստանի՝ վերջին կէսդարեայ մշակութային կեանքի տարեգրութիւնը հանդիսացող յուշագրութիւնները:

1991ին նրան բախտ վիճակուեց լինել իր ծննդավայր Վանում, տեղում ուսումնասիրեց հայկական ճարտարապետութեան գլուխգործոցներ Աղթամարի տաճարը, Անիի յուշարձանները, Կարսի եկեղեցին, Վարագավանքը եւ իր դիտարկումները հրատարակեց *Նախնեաց Ոտնահետքերով* (Երեւան, 1995) գրքում:

1979ին Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիան Վարազդատ Յարութիւնեանին շնորհեց Թորոս Թորամանեանի անուան մրցանակ՝ «Հայաստանի ճարտարապետութեանը եւ տեսութեանը նուիրուած գիտահետազօտական նոր եւ մեծարժէք աշխատութիւնների համար», որը նրան հանդիսաւոր պայմաններում Զուարթնոցում յանձնեց ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումեանը: Բեղմնաւոր գիտական եւ հասարակական աշխատանքի համար Վարազդատ Յարութիւնեանը պարգեւատրուել է մի շարք շքանշաններով ու մեդալներով, արժանացել Հայաստանի Արուեստի Վաստակաւոր Գործչի պատուաւոր կոչման: Իսկ Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա. Կաթողիկոսը նրան՝ հայ ազգին մատուցած մեծ ծառայութիւնների համար պարգեւատրել է «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով:

Հայագիտութեան ասպարէզում ունեցած մեծ աւանդի ու բեղմնաւոր աշխատանքի համար 1996ին պրոֆեսոր Վարազդատ Յարութիւնեանը միանգամայն արժանի՝ ընտրուեց Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի անդամ:

Նրա մտքի ու գրչի արդիւնք են նաեւ *Ալեքսանդր Թամանեան* (Երեւան, 1958), *Թորոս Թորամանեան* (Երեւան, 1959), *Էջմիածնի Ճարտարապետական Յուշարձանները* (Երեւան, 1969), *Հայ Ժողովրդի Ճարտարապետական Ժառանգութիւնը (Համառօտ Ակնարկ)* (Երեւան, 1979), *Makaravank* (Միլանո, 1994), *Բոսֆորի եւ Մարմարայի Ափերով (Ճամփորդական Օրագրութիւն)* (Երեւան 1996), *Կեանքիս Քառուղիներում (Կենսագրական Յուշապատումներ). Գիրք Առաջին,* (Երեւան, 1996), *Երեւանի Եկեղեցիները (Հանրամատչելի Տեղեկագիր)* (Երեւան, 1997), *Անմոռաց Հանդիպումներ. Յուշագրութիւններ* (Երեւան, 1998), *Աշխարհի Ճամփաներով* (Երեւան, Մասն Առաջին 2000. Մասն Երկրորդ, 2000), *Արուեստակից Ժամանակիցներս. Յուշեր, Բնութագրումներ, Գիրք Ա.* (Երեւան 2001), *Ճարտարապետական Յուշարձանների Վերականգնումը* (Երեւան, 2003) եւն.:

Վարազդատ Յարութիւնեանը մահացաւ 2008 Մարտի 19ին, Երեւանում:

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹԵԱՆ
muradhasratyan@rambler.ru

ՉԱՐՔԵԱԶ ՄՍՏՈՅԵԱՆ
(1955–2008)

Քուրդ գրականագէտ, հայագէտ-քրդագէտ, բանաստեղծ եւ թարգմանիչ Չարքեազ Մստոյեանը (Չարքեազէ Ռաշ) ծնուել է 1955 Օգոստոսի 25ին, Էջմիածնում: 1977-1978ին ուսանել է Երեւանի Խ. Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտի Բանասիրական Բաժնում, որն աւարտել է առաջին կարգի դիպլոմով: 1977-1978ին աշխատել է նոյն ինստիտուտի հրատարակչութիւնում որպէս խմբագիր: 1980-1984ին դասախօսել է Մանկավարժական Ինստիտուտի Գորիսի Մասնաճիւղում (2001-2002ին եղել Հայոց Լեզուի եւ Գրականութեան Ամբիոնի վարիչը): Հայաստանի տարբեր բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում դասաւանդել է հայ

գրականութիւն, գրականութեան տեսութիւն, հայոց լեզուի ոճաբանութիւն, արեւելքի գրականութիւն, գեղագիտական ուսմունքների պատմութիւն, մանկավարժութեան պատմութիւն եւ այլ առարկաներ: 1990-1992 հիմնադրել է Դաւիթ Անյաղթ Համալսարանի Քրդագիտութեան Բաժինը: 1992-1993ին քրդերէն լեզու եւ քրդական գրականութիւն է դասաւանդել Մոսկուայի Ժողովուրդների Բարեկամութեան Պետական Համալսարանում: 1993-1997ին եղել է Մոսկուայում հրատարակուող քրդական ռուսալեզու *Kurdistan Rapport* ամսագրի խմբագիրը: 1999ից խմբագրել է քրդական հայալեզու *Արեւի Երկիր*, 2003ից՝ *Միջագետք* թերթերը: 1997ից ղեկավարել է «Քուրդիստան Կոմիտէ» հասարակական կազմակերպութիւնը:

Մստոյեանի առաջին ոտանաւորները տպագրուել են դեռեւս դպրոցական տարիներին: 1968ից նրա ստեղծագործութիւնները տպագրուել են Հայաստանի հայկական եւ քրդական եւ արտասահմանի քրդական մամուլում: Բանաստեղծութիւնների առաջին գրքոյկը տպագրել է 1983ին: Ստեղծագործութիւններն առանձին գրքով լոյս են տեսել 1986ին՝ «Բառերի Ապստամբութիւնը» վերնագրով (քրդերէն): Քրդական *Նոր Գարուն* ալմանախի 10 գրքերի համահեղինակներից մէկն է: Մամուլում եւ տարբեր ժողովածուներում լոյս են տեսել հայ բանաստեղծների (Նալբանդեան, Թումանեան, Իսահակեան, Տէրեան, Չարենց, Սահեան, Պարոյր Սեւակ, Վահագն Դաւթեան), նաեւ ռուս քնարերգուների մի շարք ստեղծագործութիւններ: Քրդերէնից հայերէն եւ ռուսերէն է թարգմանել եզդիական ծիսական բնագրեր եւ քրդական միջնադարեան քնարերգութեան նմուշներ: Կատարել է նաեւ ԺԷ. դարի քուրդ բանաստեղծ Ահմադէ Խանիի «Մամ ու Զին» եօթ հազար տողանի վիպերգի ամբողջական հայերէն թարգմանութիւնը:

1980ին Մստոյեանը հրատարակել է *Քրդական Բանահիւսութեան Մշակումները Սովետահայ Գրականութեան Մէջ* գրականագիտական աշխատութիւնը: 1984ին թեկնածուական ատենախօսութիւն է պաշտպանել «Քուրդ Ժողովրդի Կեանքի Արտացոլումը Հայ Գրականութեան Մէջ» թեմայով: Գրականագիտական յօդուածներով եւ ուսումնասիրութիւններով հանդէս է եկել հայկական եւ քրդական մամուլում:

Դոկտորական ատենախօսութեան համար պատրաստել է «Քառեակի Ժանրը Հայ Գրականութեան Մէջ» ուսումնասիրութիւնը: Անտիպ են մնացել նաեւ Մստոյեանի «Քրդական Միջնադարի Գեղագիտութիւնը եւ Խօսքարուեստը», «Քրդական Գրականութեան Պատմութեան Ուրուագծեր», «Հայկական Աղբիւրները Քրդերի եւ Քրդստանի Մասին», «Քրդական Մանկական Գրականութիւն» եւ այլ աշխատութիւններ:

Ստանձնել էր նաեւ Գրիգոր Նարեկացու *Մատեան Ողբերգութեան* եւ հայ միջնադարեան քնարերգութեան տարբեր նմուշների քրդերէն թարգմանութեան աշխատանքը, սակայն մահը թոյլ չտուեց իրականացնել այդ ծրագիրը:

Չարքեազ Մստոյեանը յանկարծամահ եղաւ 2008ի Մարտի 20ին, Արմաւիրի մարզի Զուարթնոց գիւղում:

ՀՀՀ

ԵԼԵՆԱ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
(1933-2008)

Գրականագէտ, թարգմանչուհի Ելենա Աշոտի Ալեքսանեանը ծնուել է 1933 Դեկտեմբերի 18ին, Երեւանում: 1955ին աւարտելով Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրութեան Ֆակուլտէտի Ռուսաց Լեզուի եւ Գրականութեան Բաժինը՝ աշխատանքի է անցնում համալսարանի հրատարակչութիւնում իբրեւ խմբագիր: 1957-1963ին աշխատում է ռուսալեզու *Komunist* թերթի խմբագրութեան գրականութեան եւ արուեստի բաժնում: Այնուհետեւ շարունակում է ուսումը ԵՊՀ ասպիրանտուրայում, իսկ 1963ին մեկնում է Մոսկուա՝ Մաքսիմ Գորկու անուան Համաշխարհային Գրականութեան Ինստիտուտում ստաժաւորում անցնելու: Վերադառնալով՝ 1964-66ին Երեւանի Վալերի Բրիւսովի անուան Ռուսաց եւ Օտար Լեզուների Մանկավարժական Ինստիտուտում ռուս գրականութիւն է դասախօսում: 1965ին բանասիրական գիտութիւնների թեկնածուի կոչում է ստանում՝ պաշտպանելով «Կոնստանտին Պաուստովսկին Նովելիստ» թեմայով ատենախօսութիւն:

Ալեքսանեանի տարերքը գիտութիւնն էր, եւ 1967ից որպէս աւագ գիտաշխատող աշխատանքի է անցնում ՀԽՍՀ ԳԱ Մանուկ Աբեղեանի անուան Գրականութեան Ինստիտուտի Գրական Կապերի Բաժնում:

Տարիների գիտական որոնումների արդիւնքը ի մի բերելով՝ 1978ին պաշտպանում է դոկտորական ատենախօսութիւն՝ «Հայկական Ռէալիզմը եւ Ռուս Գրականութեան Փորձը» թեմայով:

Նա աւելի քան չորս տասնամեակ հայ գրականագիտութեան նուիրեալներից էր: Հայ գրականութեան արժէքները գիտնականը քննաբանում էր համաշխարհային գրական մթնոլորտի նկատառումով՝ հայ գեղարուեստական մտածողութեան ինքնատիպութիւնը դիտարկելով համամարդկային գրական աւանդոյթի ծիրում: Այս ինքնայատուկ մօտեցումը յատկորոշում է առհասարակ Ալեքսանեանի գիտական հայեացքի թափանցումներն ու խորաչափումները:

Համեմատական մեթոդաբանական սկզբունքների կիրարկումը գիտնականին հնարաւորութիւն է տուել իւրովսանն որոշարկել համաշխարհային գրական գանձարանի հայ ժողովրդի չափաբաժինը՝ առանց ազգային սնապարծութեան, մեծամտութեան կամ ճնշուածութեան բարդոյթների:

Լայն է Ալեքսանեանի գիտական հայեացքի հորիզոնը: Հայ, ռուս եւ համաշխարհային գրականութեան քաջիմացութիւնը, պրպտող միտքը, համարձակ մօտեցումը գիտական մտայայտնութիւնների մեծ հնարաւորութիւն են տուել նրան: Հայ հոգին եւ իր գրական-գեղարուեստական իրացումները դիտուել են օտար եւ ներազգային տեսանկիւններից: Գիտական բարեխղճութիւնը, ճկուն լեզուամտածողութիւնը, մեղմ յուզականութեամբ բնորոշուող ոճը, հոգեբանական նուրբ դիտարկումները շահեկանօրէն են անդրադարձել Ալեքսանեանի ուսումնասիրութիւնների վրայ ամենատարբեր թեմաների իրացման ժամանակ՝ լինեն ԺԹ. դարի ռուս դասական թէ Արծաթէ Դարի գրականութիւնը, Ցեղասպանութեան թեմայի հայ եւ օտար գեղարուեստական մշակումները թէ ֆրանսիական եւ հայկական խորհրդապաշտութեան զուգահեռումները, Բոդլէր-Վերլէն-Տէրեան-Թէքէեան-Մեծարենց, Աբովեան-Գոգոլ,

Զօհրապ-Մոպասան առնչութիւնները կամ բուլղարական, չեխական գրական իրողութիւնները:

Ելենա Ալեքսանեանը հեղինակել է *Ճանապարհ Դէպի Տուն* (Երեւան, 1966, 1996), *Կ. Պաուստովսկին Նովելիստ* (Մոսկուա, 1969), *Հայկական Ռէալիզմը եւ Ռուս Գրականութեան Փորձը* (Երեւան, 1977, 2007), *Հերոսի եւ Ոճի Որոնումների Ճանապարհին* (Երեւան, 1984), *Գրականութեան Շարժումը. Յօդուածներ* (Երեւան, 1985), *Հայաստանը Իմ Հոգում Ապրում է Հզօրաբար* (Երեւան, 2002) գրքերը (բոլորը՝ ռուսերէն): Հայերէնից ռուսերէն է թարգմանել Աւետիք Իսահակեանի, Պերճ Զէյթունցեանի, Ռաֆայէլ Արամեանի, Սերօ Խանզադեանի, Վարդգէս Պետրոսեանի ստեղծագործութիւններից:

Ելենա Ալեքսանեանը մահացաւ 2008 Յուլիսի 24ին ծանր հիւանդութիւնից՝ շատ գիտական մտայղացումներ թողնելով անաւարտ, միաժամանակ բարեխիղճ գիտնականի վաստակ, լաւ մարդու եւ ազնիւ ընկերոջ անուն թողնելով մեր յիշողութեան եւ յաւերժական ժամանակի մէջ:

ԼԻԼԻԹ-ԼՈՒՍԻՆԷ ՍԷՅՐԱՆԵԱՆ

ԵՈՒՐԻ ԲԱՐՍԵՂՈՎ
(1925–2008)

Իրաւաբանական գիտութիւնների դոկտոր, միջազգային իրաւունքի պրոֆեսոր Եուրի Գէորգիի Բարսեղովը ծնուել է 1925ի Մարտի 7ին, Թբիլիսիում: Մայրական գծով նախապապը՝ Առաքել Քարամովը, ԺԹ. դարի սկզբին կռուել է Կովկասի լեռնականների առաջնորդ Շամիլի դէմ, պարգեւատրուել երեք Գէորգիեւեան Խաչով եւ մեդալներով: Հայրը՝ Գէորգի Բարսեղովը (Գէորգ Բարսեղեան), եղել է զինուորական, այնուհետեւ՝ Թբիլիսիի Օդանաւային Գործարանի փոխտնօրէն: Մայրը՝ Սուսաննա Բարսեղովան, եղել է հայոց լեզուի ուսուցչուհի Թբիլիսիի հայկական դպրոցներից մէկում:

Միջնակարգ կրթութիւնն ստացել է Թբիլիսիի թիւ 47 ռուսական դպրոցում: 1943-1945՝ ծառայել է բանակում, արժանացել «Գերմանիայի Դէմ Տարած Յաղթանակի» եւ «Կովկասի Պաշտպանութեան Համար» մեդալներին:

1950ին աւարտել է ԽՍՀՄ Արտաքին Գործերի Նախարարութեան Միջազգային Յարաբերութիւնների Մոսկովեան Պետական Ինստիտուտը՝ «իրաւաբան-թարգմանիչ Ֆրանսիայի գծով» մասնագիտութեամբ, այնուհետեւ շարունակել է ուսումն Միջազգային Իրաւունքի Ամբիոնի ասպիրանտուրայում: Այս ժամանակաշրջանում Բեռլինի (Պոցդամի) կոնֆերանսում դրուած է եղել պատմական անարդարութիւններն ուղղելու հարցը, որի հանդէպ խորհրդային կառավարութիւնը հետաքրքրութիւն է ցուցաբերել: 1950ին Ստալինը դաշնակից տէրութիւնների առջեւ դրել էր հայկական տարածքները վերադարձնելու հարցը: Բարսեղովը, օգտուելով ստեղծուած յարմար պահից, տուել է հարցի տեսական եւ իրաւական վերլուծութիւնն ու գնահատականը՝ գրելով «Հայկական Տարածքները Միջազգային-իրաւական Գործերում» թեմայով դիպլոմա-

յին աշխատանք, այնուհետեւ՝ ատենախօսութիւն: 1953ին այն պատրաստ է եղել պաշտպանութեան, սակայն պաշտպանութիւնից մէկ շաբաթ առաջ խորհրդային կառավարութիւնը հրաժարուել է Թուրքիայի հանդէպ տարածքային պահանջներից, եւ պատրաստի ատենախօսութիւնը դարձել է անընդունելի: Այդժամ Բարսեղովը վեց ամսուայ ընթացքում գրել է նոր ատենախօսութիւն՝ «Տարածքը Միջազգային Իրաւունքում» եւ 1953ի վերջին պաշտպանել: Այն առանձին գրքով լոյս է տեսել 1958ին:

Ասպիրանտուրան աւարտելուց յետոյ Բարսեղովը դարձել է Մոսկուայի *Innostrannaya Literatura* (Արտասահմանեան գրականութիւն) հրատարակչութեան վարիչի տեղակալ, այնուհետեւ՝ Միջազգային Յարաբերութիւնների, Դիւանագիտութեան եւ Իրաւունքի Խմբագրութեան վարիչ:

1962-1968՝ Եուրի Բարսեղովն աշխատել է ՄԱԿի քարտուղարութիւնում: 1969-1972՝ ԽՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիայի Համաշխարհային Տնտեսութեան եւ Միջազգային Յարաբերութիւնների Ինստիտուտում Բարսեղովը զբաղեցրել է Միջազգային Կազմակերպութեան Բաժնի վարիչի պաշտօնը: 1972ին վերադարձել է ՄԱԿ՝ Գլխաւոր Քարտուղարի տեղակալի իրաւական յատուկ խորհրդականի եւ Քարտուղարութեան Իրաւական Բաժնի նախագահի պաշտօնով (մինչեւ 1978): Մասնակցել է ծովային իրաւունքին նուիրուած ՄԱԿի երրորդ համաժողովի եւ այլ գիտաժողովների կազմակերպմանը: 1979ին վերադարձել է Համաշխարհային Տնտեսութեան եւ Միջազգային Յարաբերութիւնների Ինստիտուտի Համաշխարհային Ովկիանոսի եւ Շրջակայ Միջավայրի Միջազգային Հիմնահարցերի Բաժին՝ որպէս Միջազգային Ծովային Իրաւունքի Բաժանմունքի վարիչ, այնուհետեւ՝ Համաշխարհային Ովկիանոսի Բաժնի վարիչ: Նոյն տարուանից սկսել է դասաւանդել Մոսկուայի Ժողովուրդների Բարեկամութեան Ինստիտուտի (այժմ՝ համալսարան) Միջազգային Իրաւունքի Բաժնում՝ ստանալով ուսուցչապետի կոչում: 1984ին պաշտպանել է դոկտորական ատենախօսութիւն «Համաշխարհային Ովկիանոսի Նուաճման Համընդհանուր Հիմնախնդրի Լուծման Միջազգային-իրաւական Հիմունքները» վերնագրով: 1987-1991՝ ՄԱԿի Ընդհանուր Ժողովի կողմից ընտրուել է Միջազգային Իրաւունքի Յանձնախմբի անդամ:

Եուրի Բարսեղովը հեղինակ է մի շարք մենագրութիւնների եւ 300ից աւելի յօդուածների՝ նուիրուած միջազգային յարաբերութիւնների, դիւանագիտութեան եւ իրաւունքի տարբեր խնդիրներին: Դրանք տպագրուել են ինչպէս Ռուսաստանում եւ Հայաստանում, այնպէս էլ այլեւայլ երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Նորուեգիա, Շուեդիա, Ճապոնիա, Ֆինլանդիա): Նրա հետաքրքրութիւնների մասնաւոր ոլորտն էր կազմում ծովային իրաւունքը. այս խնդրին են նուիրուած Բարսեղովի *Համաշխարհային Ովկիանոս. Իրաւունք, Քաղաքականութիւն, Դիւանագիտութիւն* (Մոսկուա, 1983), *Համաշխարհային Ովկիանոս. Հակամարտութիւններից Դէպի Համագործակցութիւն* (Մոսկուա, 1985), *Միջազգային Ծովային Իրաւունքի Բառարան* (Մոսկուա, 1985, համահեղինակ եւ պատասխանատու խմբագիր) եւ այլ ռուսերէն գրքերը: Ուսումնասիրել է նաեւ միջնադարեան հայկական ծովագնացութեան եւ ծովային իրաւունքի պատմութիւնը. այդ հարցին են նուիրուած նրա «Կիլիկեան Հայաստանի Պայքարը Ընդդէմ Ծովահէնութեան Միջերկրական Ծովում» ուսումնասիրութիւնը (*Պատմաբանասիրական Հանդէս*, 1973, թիւ 3, ռու-

սերէն) եւ «Ծովահէնութիւն» յօդուածը *Հայկական Սովետական Հանրագիտարանում* (հատոր 5, Երեւան, 1979, էջ 135-136):

Արցախեան շարժման տարիներին Բարսեղովը սկսել է ակտիւօրէն զբաղուել նրա հակամարտութեան կարգաւորման գործով՝ տեսականօրէն եւ գործնականում: 1994-97՝ աշխատել է ԵԱՀԿի՝ դարաբաղեան հիմնախնդրով զբաղուող Մինսկի Խմբում՝ միջազգային իրաւունքի ասպարէզում ունեցած իր գիտելիքների շնորհիւ լուրջ աւանդ ներդնելով խմբի աշխատանքի մէջ: 1999ին հիմնել է Ռուսաստանի Հայերի Միութեան հովանու ներքոյ ստեղծուած Միջազգային Իրաւունքի եւ Քաղաքագիտութեան Հայկական Ինստիտուտը, որը տնօրինել է մինչեւ կեանքի վերջը: Հրատարակել է *Հայերի Յեղասպանութիւնը՝ Յանցագործութիւն Ըստ Միջազգային Իրաւունքի* (Մոսկուա, 2000), *Միջազգային Իրաւունքի Թուրքական Ուսմունքը Յեղասպանութեան Քաղաքականութեան Ծառայութեան Մէջ (Հաշտութեան Յանձնախմբի Անդամ Գիւնդիւզ Աքթանի Հայեցակարգի Մասին)* (2002) ռուսերէն մենագրութիւնները:

Եուրի Բարսեղովի վերջին եւ ամէնից ազդեցիկ աշխատութիւնն էր երեք գրքով հրատարակուած փաստաթղթերի ժողովածուն՝ *Հայերի Յեղասպանութիւնը. Թուրքիայի Պատասխանատուութիւնը եւ Համաշխարհային Ընկերակցութեան Պարտականութիւնը: Փաստաթղթեր եւ Մեկնաբանութիւններ* վերտառութեամբ, որը լոյս է տեսել 2002-2005ին:

2005ին Բարսեղովն ընտրուել է ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի արտասահմանեան անդամ: Եղել է նաեւ Ռուսաստանի Ծովային Իրաւունքի եւ Միջազգային Իրաւունքի ընկերակցութիւնների անդամ: 2000ին ՀՀ նախագահի հրամանով պարգեւատրուել է Մխիթար Գօշի անուան մեդալով՝ «Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման հարցի գիտական հիմնաւորման եւ արցախեան հակամարտութեան կարգաւորման գործում ունեցած աւանդի համար»: Արժանացել է նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Մեսրոպ Մաշտոցի անուան շքանշանին (2000), Ռուսաստանի Հայերի Միութեան Ոսկէ Խաչին եւ այլ պարգեւների:

Եուրի Բարսեղովը մահացել է 2008ի Օգոստոսի 6ին, Մոսկուայում:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

ԳՆԷԼ ԳՐԻԳՈՐԵԱՆ
(1947-2008)

Պատմաբան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի փոխտնօրէն, պատմական գիտութիւնների թեկնածու Գնէլ Ստեփանի Գրիգորեանը ծնուել է 1947 Դեկտեմբերի 29ին, Աբովեանի շրջանի Կոտայք գիւղում: 1963ին աւարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ ընդունուել է Խաչատուր Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտի Պատմութեան Բաժինը: 1967ին աւարտել է ինստիտուտը, ապա զօրակոչուել խորհրդային բանակ: 1969 Յունուարի 16ից աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտում, մասնագիտացել միջնադարեան Հայաստանի պատ-

մութեան հարցերով: 1982ին պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն՝ «Տարօնի Բագրատունիների Ֆէոդալական Իշխանութիւնը IX-X դդ.» թեմայով: 1984ին նշանակուել է աւագ գիտաշխատողի պաշտօնում: 2002ին դարձել է Ինստիտուտի Գիտական Հարցերի գծով փոխտնօրէն:

Գնէլ Գրիգորեանը դասաւանդել է նաեւ հանրապետութեան ԲՈՒՀերում եւ Մայր Աթոռի Գէորգեան Ճեմարանում:

Գրիգորեանը նշանակալի ներդրում է ունեցել հայ միջնադարագիտութեան ասպարէզում: Նրա մենագրութիւնները՝ *Տարօնի Բագրատունիների Ֆէոդալական Իշխանութիւնը IX-X դդ.* (Երեւան, 1983), *Նուիրատուութիւններ Անիի Եկեղեցիներին ու Վանքերին IX-XIV դդ.* (Ս. Էջմիածին, 2002) եւ գիտական բազմաթիւ յօդուածները նշանակալի ներդրում են հայ պատմագիտութեան բնագաւառում:

Նրա առաջին գիտական մենագրութիւնը՝ *Տարօնի Բագրատունիների Ֆէոդալական Իշխանութիւնը IX-X դդ.*, նոր խօսք էր հայ միջնադարագիտութեան ասպարէզում: Ուսումնասիրութիւնը նուիրուած է զարգացած միջնադարեան Հայաստանի կարեւոր պետական կազմաւորումներից մէկի պատմութեանը: Աշխատութիւնում մանրամասն լուսաբանւում են ոչ միայն Տարօնի եւ այլ հայկական իշխանութիւնների, այլեւ հարեւան երկրների՝ Արաբական Խալիֆայութեան եւ Բիւզանդական Կայսրութեան հետ այդ հայկական իշխանութիւնների ունեցած յարաբերութիւններին առնչուող կարեւորագոյն հարցեր:

Բաւական լայն է Գրիգորեանի գիտական հետազօտութիւնների շրջանակը. գիտնականի յաջորդ մենագրութիւնը նուիրուած է Բագրատունեաց մայրաքաղաք Անիի հոգեւոր եւ տնտեսական կեանքի լուսաբանմանը: *Նուիրատուութիւններ Անիի Եկեղեցիներին ու Վանքերին* աշխատութիւնում հեղինակը կիրառել է հարցի լուսաբանման այնպիսի մօտեցում, որի շնորհիւ որոշակի են դառնում հոգեւոր մարմինների կալուածքների վերաբերեալ պատկերացումները, բացայայտւում նուիրատուութիւնների շարժընթացը, ցոյց տրւում կալուածների կառուցուածքը եւ նշանակութիւնը, եկամտաբերութիւնը, գները, նրանց նկատմամբ իրաւունքի հիմնական ձեւերը եւն.: Համակողմանի քննութեան են առնւում նուիրատուութիւնների արժէքն ու կառուցուածքը, նուիրատուների սոցիալական կազմը: Այդ առումով սոյն մենագրութիւնը հայ միջնադարագիտութեան բնագաւառում եզակի է:

Գրիգորեանը հեղինակել է նաեւ *ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի 60 Տարին* (Երեւան, 2003) աշխատութիւնը: Նա իրաւամբ այդ գիտական հաստատութեան պատմութեան կենդանի տարեգիրն էր: Այդ գրքում ի մի է բերւում ինստիտուտի 60ամեայ կենսագրութիւնը, նրա ունեցած աւանդը հայագիտութեան զարգացման գործում: Այն Ի. դարի երկրորդ կէսի հայ պատմագիտական մտքի նուաճումների մի իւրատեսակ ամփոփում է:

Գնէլ Գրիգորեան մարդուն, քաղաքացուն, գիտնականին թէկուզեւ հպանցիկ ճանաչողները առաջին հերթին կը նշեն նրա մարդկային բարոյական բարձր նկարագիրը: Նրա անսահման բարութիւնն ու հոգատարութիւնը նկատելի էր իր գործունէութեան բոլոր ոլորտներում՝ ընտանիքից մինչեւ ընկերութիւն, լսարանից մինչեւ ինստիտուտ: Գրիգորեանը յատկապէս ուշադիր էր երիտասարդ սերնդի նկատմամբ: Չափազանց մեծ է նրա վաստակը հայկա-

կան պատմագիտական մտքի գլխաւոր դարբնոցի՝ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի գործունէութեան մէջ:

Գնել Գրիգորեանն իր երկրի իսկական քաղաքացին էր, նա ապրում եւ շնչում էր իր երկրի հոգսերով, ուրախանում յաջողութիւններով: Նրա համար հայրենիքը բարձրագոյն արժէք էր: Երկրին բաժին հասած դժուարութիւնները հաւասարապէս իրենն էին:

Գնել Գրիգորեանը մահացաւ 2008 Հոկտեմբերի 4ին, Երեւանում:

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գնել Գրիգորեանը աշխատակցած է նաեւ Հայկազեան Հայագիտական Հանդէսին (Հտր. ԻԶ., էջ 417-419): Իր մահով, ՀՀՀն կը կորսնցնէ արժէքաւոր աշխատակից մը:

ՀՄԱՅԵԱԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
(1926-2008)

Պատմական գիտութիւնների թեկնածու Հմայեակ Մարտիրոսեանը ծնուել է 1926 Դեկտեմբերի 21ին, Կիսլովոդսկ քաղաքում (Հիւսիսային Կովկաս), մշեցի հօր եւ կարսեցի մօր ընտանիքում: Միջնակարգ կրթութիւնն ստացել է ծննդավայրի ռուսական դպրոցում: Հայերէնը սովորել է 1947ին, Երեւան տեղափոխուելուց յետոյ: 1952ին աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի Միջազգային Յարաբերութիւնների Բաժինը, 1962ին՝ ԽՍՀՄ Արտաքին Գործերի Նախարարութեան Բարձրագոյն Դիւանագիտական Դպրոցը: 1962-1965 եղել է Իրանում ԽՍՀՄ դեսպանատան երկրորդ քարտուղար, իսկ 1973-1976՝ Գանայում ԽՍՀՄ դեսպանատան առաջին քարտուղար:

Մարտիրոսեանը գիտական աշխատանքն անցկացրել է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան եւ Պատմութեան ինստիտուտներում որպէս աւագ գիտաշխատող: 1969ին պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն՝ «Իրանահայ Գաղութի Պատմութիւնից (Նորագոյն Շրջան)» նիւթով (ռուսերէն):

Հրատարակել է «Իրանահայ Գաղութի Պատմութիւնից (Նորագոյն Շրջան)» (*Մերձաւոր եւ Միջին Արեւելքի Երկրներ եւ Ժողովուրդներ, VIII, Իրան*), (Երեւան, 1975), *Հայկական Բնակավայրերը Իրանի Տարածքում XI-XV դդ.* (Երեւան, 1990, ռուսերէն), *Մետաքսի Մեծ Ճանապարհին* (Երեւան, 1998, ռուսերէն), *Հայաստանի եւ Մերձաւոր Ասիայով Անցնող Միջազգային Ճանապարհները Ըստ Պեւտինգերեան Քարտէզի* (Երեւան, 2003, ռուսերէն), «Իրան» (*Հայ Գաղթաշխարհի Պատմութիւնից*, 2, (Երեւան, 2003) եւ *Իրանահայ Գաղութի Պատմութիւն* (Երեւան, 2007) աշխատութիւնները:

Մարտիրոսեանն աշխատակցել է նաեւ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին՝ նրա էջերում հրատարակելով «Պեւտինգերեան Քարտէզ. Առաջաւոր Ասիայի Հատուածամասերը» (Հտր. ԻԱ., 2001) եւ «Պեւտինգերեան Քարտէզ. Նոր Տեղեկութիւններ Հայաստանի եւ Առաջաւոր Ասիայի Միջով Անցնող

Ճանապարհների Մասին» (Հտր. ԻԳ., 2003) ուսումնասիրութիւնները: Իր մահով ՀՀՀն կորցնում է իր արժէքաւոր աշխատակիցներից մէկին:

Հմայեակ Մարտիրոսեանը մահացաւ 2008ի Հոկտեմբերի 4ին, Երեւանում:

ՀՀՀ

ԿԱՌԼԷՆ ԴԱԼԼԱՔԵԱՆ
(1929–2008)

Պատմաբան, գրականագէտ, թարգմանիչ Կառլէն Լեւոնի Դալլաքեանը ծնուել է 1929ին՝ Լոռու Մարզի (նախկին Թումանեանի շրջանի) Ալավերդի քաղաքում: 1938ից ի վեր բնակւում էր Երեւանում:

1951ին աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Ֆակուլտէտի Ռոմանոգերմանական Բաժինը: Մէկուկէս տարի աշխատել է Ներքին Գործերի Նախարարութիւնում, իրականացրել է կոմերիտական զանազան աշխատանքներ՝ զուգահեռաբար սովորելով համալսարանի հեռակայ ասպիրանտուրայում: 1957ից մինչեւ 1962ի տարեվերջը աշխատել է Հայկոմկուսի Կենտկոմում որպէս հրահանգիչ, Մամուլի Բաժնի վարիչ, Պրոպագանդայի Բաժնի վարիչի տեղակալ: 1963ի Յունուարին նշանակուել է ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի Մշակոյթի Բաժնի վարիչ: Նոյն թուականի Յուլիսից մինչեւ 1970ի Յունուարը եղել է ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդին Առընթեր Հայ Եկեղեցու Գործերի Խորհրդի նախագահ: 1970ից մինչեւ 1985ի տարեվերջն աշխատել է ՀԿԿ Կենտկոմում որպէս Պրոպագանդայի եւ Ագիտացիայի Բաժնի վարիչի տեղակալ, Բաժնի վարիչ, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար: 1985 Դեկտեմբերից մինչեւ 1991 Փետրուարը զբաղեցրել է Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահի պաշտօնը: Զուգահեռաբար, 1986ի Մարտից մինչեւ 1995ի Հոկտեմբերն աշխատել է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Սփիւռքահայ Համայնքների Պատմութեան եւ Մշակոյթի Բաժնում որպէս վարիչ, ապա՝ գլխաւոր գիտաշխատող: Երեք անգամ ընտրուել է ՀԽՍՀ Գերագոյն Խորհրդի պատգամաւոր:

Գիտական ասպարէզ նա մտել է երիտասարդ հասակում: 1965ին պաշտպանել է թեկնածուական՝ «Լիբանանահայ Մամուլի Պատմութիւնը» նիւթով, 1988ին՝ դոկտորական ատենախօսութիւն բանասիրական գիտութիւնների գծով՝ «Արշակ Չօպանեանը եւ Սփիւռքահայ Գրականութեան Զարգացման Հարցերը» թեմայով: Պարբերական մամուլում սկսել է հանդէս գալ 1954ից: Հայաստանի, Սփիւռքի եւ Խորհրդային Միութեան ամսագրերում եւ լրագրերում հրատարակել է մշակութաբանական, քաղաքական եւ հասարակագիտական հարիւրաւոր յօդուածներ: Դրանցից աւելի քան յիսունը շօշափում են գրականագիտական, պատմագիտական եւ արուեստաբանական խնդիրներ:

1964ին հրատարակուել է նրա *Լիբանանահայ Դեմոկրատական Մամուլի Պատմութիւնից*, 1987ին՝ *Արշակ Չօպանեան: Կեանքն ու Գործը*, 1992ին՝ *Հայ Սփիւռքի Պատմութիւն*, 1994ին՝ *Ակնարկներ Սփիւռքահայ Մտքի Պատ-*

մութեան, 1996ին՝ *ՀԲԸ Միութեան Նախագահ Գ. Կիլպենկեանի Հրաժարականի Հարցի Շուրջ*, 1998ին՝ *Յուշապատում. Դէմքեր, Իրողութիւններ, Մտորումներ*, 1999 եւ 2007ին՝ *Ռամկավար Ազատական Կուսակցութեան Պատմութիւն* երկհատորեայ աշխատութիւնները: Հեղինակ է մշակութաբանական, պատմագիտական, հասարակագիտական 11 գիտահանրամատչելի գրքոյկների: 1987ին հրատարակել է *Հպանցիկ Դիմապատկերներ* ժողովածուն, որը պարունակում է ակնարկներ հայ եւ համաշխարհային մշակոյթի նշանաւոր գործիչների ու պատմական ականաւոր անձանց վերաբերեալ: Իւրաքանչիւր աշխատութեան մէջ հեղինակը ոչ միայն շրջանառութեան մէջ է դրել նորայայտ եւ հարուստ արխիւային նիւթեր, այլեւ մեծ վարպետութեամբ գնահատել է անհատների գործունէութիւնն ու պատմական իրադարձութիւնները:

1953ից ի վեր Դալլաքեանը զբաղուել է նաեւ թարգմանչական գործով: Ռուսերէնից եւ անգլերէնից նրա թարգմանութեամբ լոյս են տեսել մի շարք վէպեր ու պատմուածքների ժողովածուներ: Զեկուցումներով հանդէս է եկել Հայաստանում, Սփիւռքում եւ ԽՍՀՄ մի շարք գիտական կենտրոններում կազմակերպուած գիտաժողովներում ու սեմինարներում:

Անգնահատելի է Դալլաքեանի աւանդը հայ գրականագիտութեան եւ սփիւռքագիտութեան բնագաւառում: Նրա գիտական գործունէութիւնն իրապէս արժանի է հիացմունքի եւ երախտագիտութեան: Գտնուելով իշխանութեան վերին օղակներում՝ Դալլաքեան գիտնականը միշտ հաւատարիմ է մնացել գիտութեան սկզբունքներին, եւ պատահական չէ, որ նրա բոլոր աշխատութիւնները դիմացել են ոչ միայն գիտութեան եւ ժամանակի քննութեանը, այլեւ նոր շունչ ու որակ են հաղորդել հայ գրականագիտութեանն ու պատմագիտութեանը: Յանկացած խնդիր, որ շօշափում էր նշանաւոր բանաստէրն ու պատմաբանը, հասցուում էր իր ծագմանն ու առաջացման պատճառներին, ստանում էր միանգամայն հիմնաւորուած լուծում ու գնահատական: Այն բացառիկ գիտնականներից էր, որն առաջնորդւում էր հետեւեալ սկզբունքով՝ եթէ տեսութիւնը չի համապատասխանում փաստերին, ապա անհրաժեշտ է դէն նետել տեսութիւնը, այլ ոչ թէ փաստերը:

Կառլէն Դալլաքեանը մահացել է 2008 Հոկտեմբերի 13ին, Երեւանում:

ՎԱՀՐԱՄ ՂԱՐԱԽԱՆԵԱՆ
gharakhan@rambler.ru

ՄԵՍՐՈՊ Ծ. ՎՐԴ. ՃՈՒՐԵԱՆ
(1931-2008)



Հայ Կաթողիկէ զմմառեան միաբան Հայր Մեսրոպ Ծայրագոյն վարդապետ Ճուրեան ծնած է Քեսապ, Սուրիա 1931ին: 1945-1953՝ ուսանած է Զմմառու Նորընծայարանին մէջ, ապա մեկնած Հռոմ, ուր Յիսուսեան հայրերու Գրիգորեան Համալսարանին մէջ հետեւած է իմաստասիրական եւ աստուածաբանական բարձրագոյն կրթութեան:

Կուսկարօն քահանայ ձեռնադրուած է 1959ին, ձեռամբ կարդինալ Աղաճանեանի: Աստուածաբանական ուսումը ամբողջացուցած է Յիսուսեան Հայրերու Պէյրութի Սէն Ժոզէֆ Համալսարանին մէջ:

Հովուական-ժողովրդապետական եւ կրթական բեղուն գործունէութիւն ծաւալած է Լիբանանի, Սուրիոյ եւ Հռոմի մէջ: Տարիներ շարունակ վարած է Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարանի տնօրէնութիւնը: 15 տարի՝ 1983-1988 եւ 1993-2003 վարած է Հայ Կաթողիկէ *Ասեմիք* Պատրիարքական պաշտօնաթերթին խմբագրութիւնը, միաժամանակ ստորագրելով տարաբնոյթ յօդուածներ:

Ճուրեան վարդապետի գրական ժառանգութիւնը կը բաղկանայ առաւելաբար հոգեւոր-կրօնական ու եկեղեցական տասնեակ մը գիրքերէ ու հարիւրաւոր յօդուածներէ եւ թարգմանութիւններէ: Մատենագիտական իր աշխատանքին հիմնական վաստակը *Յուցակ Զմմառու Մատենադարանի Հայերէն Հնատիպ Գիրքերուն* արժէքաւոր աշխատանքն է (լուսատիպով հրատարակուած, 1983ին), որ կ'ընդգրկէ Զմմառու Մատենադարանին մէջ գտնուող 1512-1800 թուականներուն հրատարակուած 335 հայերէն գիրքերու ամբողջական ցուցակը, վերստուգուած Զարբհանալեանի *Հայկական Մատենագիտութիւն* եւ Անասեանի *Հայ Հնատիպ Գրքի Մատենագիտական Յուցակ* աշխատութիւններուն տուեալներով ու հետեւելով անոնց մեթոտաբանութեան: Բաց աստի, *Ասեմիք*ի էջերուն մէջ ցրուած կը մնան Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ պատմութեան նուիրուած իր յօդուածները, որոնք հաւանաբար փոքր մասնիկներն են *Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Պատմութիւնը* անտիպ հատորին: Իր թուղթերուն մէջ կը մնայ նաեւ *Հայ Ծիսագիտութեան Պատմութիւն* հատորի ձեռագիրը: Ճուրեան վարդապետի մահով անիրագործելի մնացին նաեւ Ե.-ԺԵ. դարերու Հայ Եկեղեցւոյ ընդհանուր պատմութիւնը գրելու իր մտադրութիւնը, ինչպէս նաեւ զանազան աշխատանքներ:

Ճուրեան վարդապետ վախճանեցաւ 16 Նոյեմբեր 2008ին, Զմմառ:

ՀՀՀ

ՆԱՐՍԻՍՕ ՊԻՆԱՅԵԱՆ ԳԱՐՄՈՆԱ
(1928-2008)

Նարսիսօ Պինայեան Գարմոնա ծնած է Պուենոս Այրէս, 24 Սեպտեմբեր 1928ին: Մեծ հայրը՝ Մկրտիչ Պինայեան, Վանէն մեկնած ու Հարաւային Ամերիկա հաստատուած է 1889ին: Հայրը՝ Նարսիսօ Պինայեան (1896-1970), արժանթինեան պատմագրութեան եւ բանասիրութեան յայտնի անուն էր, նաեւ՝ արժանթինահայ մտաւորական կեանքին մէջ իր լման ներդրած անձնաւորութիւն: Այդ պատճառով, որդին ստորագրած է մօրենական Գարմոնա մականունին կցումով - երբեմն՝ «կրտսեր» ածականով՝ Narciso Binayan (h.):

Իրաւաբանական ճիւղին հետեւած է Պուենոս Այրէսի Պետական Համալսարանին մէջ, բայց զայն ձգած է անաւարտ: Աւելի ուշ մտած է լրագրական ասպարէզ: 1960-1991ին մաս կազմած է Արժանթինի ամենահեղինակաւոր ու հնագոյն օրաթերթերէն մէկուն՝ *La Nacion*ի խմբագրութեան: Գիտական թէ լրագրական առաքելութեամբ այցելած է մօտ հարիւր

երկիր եւ բազմահարիւր յօդուածներ գրած՝ արժանթինեան եւ հայ մամուլին մէջ:

Լրագրութեան կողքին, 1950ականներէն լրջօրէն զբաղած է պատմութեամբ: Արժանթինեան շարք մը գիտական հաստատութիւններու անդամակցութեան կողքին, թղթակից անդամ էր Փարակուայի Պատմութեան Ակադեմիային եւ Զինանշանագիտութեան ու Տոհմաբանութեան Մատրիտեան Արքայական Ակադեմիային: Տարբեր մրցանակներու արժանացած է իր գիտական գործունէութեան համար: Ստացած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ի շնորհած «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանը եւ Լեհաստանի Արժանեաց ոսկեայ շքանշանը:

Պատմագիտութեան իր հետաքրքրութեան առանցքներէն մէկը եղած է տոհմաբանութիւնը: Իր գլխաւոր գործն է *Historia Genealógica Argentina* (Արժանթինի տոհմաբանական պատմութիւն), լոյս տեսած՝ 1999ին, որ կը պարունակէ նաեւ 20 էջնոց գլուխ մը՝ արժանթինահայ համայնքի տոհմաբանութեան մասին: 1958-2000ին լոյս տեսած իր յօդուածներուն մէկ ընտրանին հրատարակուած է *Dieciséis Estudios Genealógicos* (Տասնվեց տոհմաբանական ուսումնասիրութիւններ) հատորին մէջ (2002), ուր ընդգրկած է 1978ին լոյս տեսած «Հայ Իշխանուհի մը Սանթիակո Տէ Գոմփոստելայի Մէջ ԺԱ. Դարուն. Իր Տոհմածառը» սպաներէն յօդուածը:

Պինայեանի հետաքրքրութեան միւս առանցքը եղած է հայոց պատմութիւնը: Հրատարակած է արժանթինահայ համայնքի պատմութեան նուիրուած երկու հատորներ՝ *La Colectividad Armenia en la Argentina* (Հայ գաղութը Արժանթինի մէջ, 1974) եւ *Entre el Pasado y el Futuro: Los Armenios en la Argentina* (Անցեալի եւ ապագայի միջեւ. հայերը Արժանթինի մէջ, 1996): Իր գրիչին կը պատկանին առանց հեղինակի յիշատակումի հրատարակուած երկու ուսումնասիրութիւններ՝ *Exterminio Armenio de 1915. El Genocidio Más Horrible de la Historia* (1915ի հայկական բնաջնջումը. պատմութեան ամենասարսափելի ցեղասպանութիւնը, անթուակիր) եւ *El Tratado de Sevres y la Cuestión Armenia* (Սեւրի Դաշնագիրը եւ Հայկական Հարցը, 1970, հեղինակակից՝ Փասքուալ Օհանեան): Ֆրանսերէնէ սպաներէնի թարգմանած է Մաղաքիա Արք. Օրմանեանի *Հայոց Եկեղեցին* հատորը (անտիպ. թարգմանութիւնը կորսուած է):

Նարսիսօ Պինայեան Գարմոնա մահացաւ Պուենոս Այրէս, 1 Դեկտեմբեր 2008ին:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
varny1p@yahoo.com